



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Կյուրին համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Նոր Կյուրին, ,

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 մայիսի 2014 թվականի N 20

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏԱՐԱԾՔԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՍՏԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՄՐՑՈՒՅԹ
ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48.1 և 78-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշման 46.2 կետով, նկատի ունենալով, որ նշված հողատարածքը դասվում է հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի շարքին, և հաշվի առնելով, որ համայնքի ավագանու՝ 11.04.2014 թվականի թիվ 15 որոշմամբ հաստատված մրցույթի հայտարարության տեքստում հայտնաբերվել են օրենքի հետ անհամապատասխանություններ՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

1. Թույլատրել Նոր Կյուրին համայնքի ղեկավարին համայնքի 1-ին փող. թիվ 6/2 հասցեում գտնվող բնակավայրերի ընդհանուր օգտագործման 0.00196 հա հողատարածքը, որից 0.00077 հա հողատարածքը հանդես է գալիս 03-072-0440-0001 ծածկագրի ներքո, իսկ 0.00119 հա հողատարածքը՝ 03-072-0443-0001 ծածկագրի ներքո, 99 տարի ժամկետով կառուցապատման իրավունքով տրամադրելու համար կազմակերպել նոր մրցույթ:
2. Մրցույթում կառուցապատման իրավունքով տրամադրվող հողատարածքի տարեկան վարձավճարի մեկնարկային գին սահմանել 3000 / երեք հազար / ՀՀ դրամ:
3. Հաստատել հայտարարության նոր տեքստը՝ համաձայն հավելվածի:
4. Նոր Կյուրին համայնքի ավագանու՝ 11.04.2014 թվականի թիվ 15 որոշումը համարել չեղյալ:

Կողմ -3


Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԲԱՐՍԵՂՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ



2. ԿԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՇՈՏ



3. ՕՇԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ



5/22/2014

X



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՎԱՎԱՐ՝

ԳԵՎՈՐԳ ՕՇԱՆՅԱՆ